ՀՍՍՀ ԳԱ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 26-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ տարեկան ժողովը, որը նվիրված էր ԳԱ 1968 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքներին և ակադեմիայի 25-ամյակին։

Ժողովում «Ակադեմիայի 25 տարին և նրա հերթական խնդիրները» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

— 1943 թվականի նոյեմբերյան աշնող օրերին ծնունդ առավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան,— ասաց Վ. Համբարձումյանը.— Հայրենական մեծ պատերազմի ծանր օրերին կատարված այդ ակտը, երբ սովետական ժողովրդի նյութական ու հոգևոր ուժերը ուղղված էին թշնամուն ջախջախելու նպատակին, լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի փայլուն արտահայտությունն է։ Հայաստանի ակադեմիայի ստեղծման գործում վիթխարի դեր խաղաց նաև նրա առաջին պրեզիդենտ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին։

Զեկուցողը ընդգծեց, որ ակադեմիայի գոյության առաջին իսկ տարիներից հատուկ ուշադրություն էր նվիրվում ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական գիտություններին։ Դրա շնորհիվ աստրոֆիզիկայի և ֆիզիկայի, մաթեմատիկայի և մեխանիկայի, հաշվողական տեխնիկայի ասպարեզում հայ գիտնականները հասան միջազգային ճանաչում գտած հաջողությունների։ Նրանց հետազոտությունները նպաստեցին արդյունաբերության և գիտության կարևորագույն ճյուղերի՝ էներգետիկայի, էլեկտրատեխնիկայի և էլեկտրոնիկայի, սարքաշինության, շինարարական գործի զարգացմանը։

Անդրադառնալով քիմիական գիտություններին և երկրագիտությանը, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը նշեց այդ բնագավառներում կատարված աշխատանքների լայն դիապազոնը և մեծ արդյունավետությունը։ Նա ընդգծեց, որ Հայաստանի տերիտորիան եղակի է Միության մեջ օգտակար հանածոներով հագեցվածության տեսակետից, ուստի և ընդերքի հետախույզների առաջ անընդհատ նորանոր խնդիրներ են դրվում։

Տեսական ու գործնական մեծածավալ պրոբլեմներ են մշակվել ֆիզիոլոգիայի, ագրոքիմիայի, հիդրոպոնիկայի, միկրոկենսաբանության, բիոքիմիայի բնագավառներում, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացրել հանրապետության սահմաններից շատ հեռու։

Կանգ առնելով հասարակական գիտությունների վրա, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը ասաց, որ հասարակական գիտությունների բնագավառում մեր ավանդույթները ավելի հարուստ են, քան գիտության որևէ այլ ասպարեզում։ Բավական է հիշատակել, որ հանրապետության գիտությունների ակադեմիայի առաջին կազմի մեջ մտան այնպիսի խոշոր հայագետներ, ինչպիսիք են Հր. Աճառյանը, Հ. Օրբելին, Մ. Աբեղյանը, Հ. Մանանդյանը, Ս. Մալխասյանը, որոնք դրեցին այդ բնագավառի հետագա աշխատանքների հիմքերը։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտնականների կապերը, նշեց ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, ամրապնդվել են եղբայրական սովետական հանրապետությունների և արտասահմանյան պետությունների գիտնականների հետ։ Արտասահմանյան գործուղումների թվով Հայաստանի գիտությունների ակադեմիան հանրապետական ակադեմիաների մեջ առաջին տեղն է գրավում։

Հանրագումարի բերելով ակադեմիայի 25-ամյա գործունեությունը, զեկուցողն ասաց, որ այդ ժամանակամիջոցում հանրապետությունում գիտական աշխատողների թիվը ավելացել է 10 անգամ և կազմում է մոտավորապես 16 հազար։

Զեկուցման վերջում ակադեմիկոս Վ. Համբարձումյանը կանգ առավ հանրապետության գիտության զարգացման հեռանկարների վրա։ Նա հատուկ ուշադրություն նվիրեց ավտոմատացման, գիտական փորձերի ու չափումների, գիտական սարքաշինության ինտենսիվ զարգացման հարցերին։

«Ակադեմիայի 25 տարին և նրա հերթական խնդիրները» և «ՀՍՍՀ ԳԱ 1968 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքների հաշվետվությունը» զեկուցումների շուրջը բացվեց մտքերի փոխանակություն։

ՀՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանի ելույթը նվիրված էր հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկների գործունեությանը։ Անցյալ տարի, ասաց նա, գիտության այդ ճյուղերի զարգացման նպատակին հատկացվել են մեծ միջոցներ ու սարքավորումներ, բայց համապատասխան շենք չունենալու պատճառով ձեռք բերված ապարատները չեն օգտագործվում։ Երբ ամբողջ սովետական ժողովուրդը նախապատրաստվում է Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին, առանձնապես կարևոր խնդիրներ են դրվում պատմաբանների, լեզվաբանների, գրականագետների առջև։ Գիտությունների ակադեմիայի նախագահությունը արդեն հաստատել է այդ նշանակալի տարեթվին նվիրված հոբելյանական սեսիաների և գիտաժողովների պլանը։ Բացի դրանից, ընթացիկ տարվա դեկտեմբերից Երևանում և հանրապետության ուրիշ քաղաքներում անցկացվելու են լենինյան թեմայի առանձին պրոբլեմներին նվիրված 13 սեսիա։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Կարապետյանը խոսեց կերի սպիտակուցի պրոբլեմի մասին, որն ունի ժողովրդատնտեսական կարևոր նշանակություն։ Այդ հարցի լուծմանն ենք մոտեցել ակադեմիայի մի շարք ինստիտուտների կոլեկտիվների միացյալ ուժերի շնորհիվ։

Գիտական կարևոր հարցերի մասին ելույթներով հանդես եկան նաև ակադեմիկոսներ Ա. Ղարիբյանը, Ի. Եղիազարովը, պրոֆեսոր Խ. Միրիմանյանը։

Ընդհանուր ժողովում «Բուսերի աճի ու փթթման քիմիական կարգավորումը» զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս Ս. Ջայլախյանը։

ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովի աշխատանքին մասնակցեցին ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանը, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը, ՀԿԿ Կենտկոմի քարտուղարներ Դ. Տեր-Ղազարյանցը, Ռ. Խաչատրյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Լ. Ստեփանյանը։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 24—25-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովը։ «Բաժանմունքի 1968 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները» զեկուցումով հանդես եկավ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը։

— Առաջնորդվելով հասարակական գիտությունների զարգացման վերաբերյալ կուսակցության և կառավարության որոշումներով,— նշեց զեկուցողը, Հայաստանի գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների գիտահետազոտական հիմնարկները վերջին ժամանակներս հասել են զգալի նվաճումների։ Հաշվետու տարում բաժանմունքի հիմնարկներում ուսումնասիրվել է 303 թեմա, որոնցից ավարտված է 115-ը։

Այնուհետև, ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը իր զեկուցման մեջ կանգ առավ բաժանմունքի գիտական հիմնարկների գիտահետազոտական աշխատանքների վերլուծման վրա։

Այսպես, տնտեսագիտության բնագավառում հատուկ ուշադրություն է դարձվել հասարակական արդյունավետության բարձրացման պրոբլեմների ուսումնասիրմանը։ Տնտեսագետները հետազոտել են այնպիսի պրոբլեմներ, ինչպես «Շահութաբերության և աշխատանքի վարձատրության համահարթեցման պրոբլեմները հանրապետության կոլտնտեսություններում», «Տնտեսական հաշվարկն ու հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման արդյունավետության բարձրացումը ՀՍՍՀ կոլտնտեսություններում», «Զուլվածքային արտադրության համակենտրոնացումը և մասնագիտացումը Հայկական ՍՍՀ-ում», «Գիտատեխնիկական առաջադիմությունը և նրա նյութական խթանումը», «Հայաստանի տնտեսական զարգացումը վաղ ստրկատիրական ժամանակաշրջանում», «Ստեփան Շահումյանի տնտեսագիտական հայացքները» և այլ թեմաներ։ Ինստիտուտը զգալի օգնություն է ցույց տվել հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններին՝ տնտեսական ռեֆորմի իրականացման գործում։

Հաշվետու տարում գիտահետազոտական զգալի աշխատանքներ է տարել պատմության ինստիտուտը։ Նրա վերջին տարիների կարևորագույն պրոբլեմը եղել է հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի և պատմագրության պատմության ստեղծումը։ Այդ ուղղությամբ, չնայած կատարված գրական աշխատանքներին, դեռևս անելիքներ կան, որոնք պետք է դառնան մեր պատմաբանների ուշադրության առարկան։ Պատմության ինստիտուտի ավարտված պրոբլեմներից են՝ «Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի ազատագրման համար մղված մարտերում (1941—1944 թթ.)», «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» փաստա-

թղթերի ժողովածու (հատոր 1), «Հայ ժողովրդի մատենագիտություն» (3-րդ հատոր) և այլ թեմաներ։

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում շարունակվել են աշխատանքները ժամանակակից հայոց լեզվի գիտական քերականության ուղղությամբ։ Հաշվետու տարում ինստիտուտում կազմակերպված տերմինաբանության բաժինը հնարավորություն կստեղծի ավելի մոտիկից և գործնականորեն զբաղվելու սովետահայ տերմինաշինության հարցերով։ Զգալի աշխատանք է կատարվել նաև հայոց լեզվի պատմա-համեմատական ուսումնասիրության, բառարանագիտության ուղղությամբ և այլն։

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կարևոր խնդիրն է եղել՝ ստեղծել հայ նոր գրականության հին հատորյակը։ Արդեն լույս են տեսել առաջին երեք հատորները։ Աշխատանքներ են տարվել հայ դասական գրողների կյանքի և ստեղծագործության ուսումնասիրության, գրականության տեսության, տեքստաբանության, գրական կապերի, ինչպես նաև Հ. Թումանյանի ծննդյան 100-ամյակի նախապատրաստության ուղղությամբ։

Հնագետները շարունակել են իրենց ուսումնասիրությունները Լճաշենի, Մեծամորի, Կարմիր բլուրի, Արինբերդի, Նոր Արմավիրի, Գառնիի, Հին Արմավիրի, Դվինի հնագիտական օբյեկտներում։ Պեղումների հնագիտական հետազոտությունների միջոցով հայտնաբերվել են նոր հնագիտական նյութեր՝ Արգիշտի առաջինի, Սարգուր երկրորդի, Ռուսա երրորդի արձանագրությունները։ Հնագետները նկայական աշխատանք կատարեցին Երևանի 2750-ամյա հոբելյանի նախապատրաստման և անցկացման գործում։ Ավարտվել են այնպիսի կարևոր թեմաների ուսումնասիրությունները, ինչպես «Հայաստանի կիլիկիայան ամրոցները», «Միջնադարյան Հայաստանի ամրոցները», «Դվինի կենտրոնական թաղամասի պեղումների արդյունքները», «Գեղամա լեռների ժայռապատկերները», «Մ. թ. ա. 3-րդ հազարամյակի արվեստն ու պաշտամունքը» և այլն։ Զգալի աշխատանքներ են տարվել նաև աղբագրության և բանահյուսության բնագավառներում։

Արվեստի ինստիտուտի ուշադրության կենտրոնում են եղել Կոմիտասի ծննդյան 100-ամյակի նախապատրաստության կապակցությամբ մեծ կոմպոզիտորի ստեղծագործությանը նվիրված ժողովածուի, Կոմիտասի երգերի 6—8-րդ հատորների հրատարակության պատրաստելը, «Հայ երաժիշտների կենսագրական համառոտ բառարանի» կազմումը, Նիկողայոս Տիգրանյանին և Խրիստափոր Կուշնարյովին նվիրված ժողովածուների, «Հայ ճարտարապետության պատմության» ռապատկերները, «Մ. թ. ա. 3-րդ հազարամյակի արվեստն ու պաշտամունքը» և այլն։ Զգալի աշխատանք է կատարվել նաև մշակութային կապերի ուսումնասիրության, հայկական կիրառական արվեստի, շեքսպիրագիտության և այլ բնագավառներում։

Արևելագետները ավարտել են «Իրանի հայ գաղութը 1917—1918 թթ.», «Հայ-արաբական գրական և կուլտուրական կապերը», «Հայկական աղբյուրները Հնդկաստանի և XIX դարի հայ-հնդկական հարաբերությունների մասին» և այլ պրոբլեմների ուսումնասիրությունը։

Փիլիսոփայության և իրավունքի սեկտորի գիտնականները հրատարակության են հանձնել «Գիտական գիտելիքների տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցերը» կոլեկտիվ աշխատությունը, «Վ. Ի. Լենինը սոցիալիստական հեղափոխության դիալեկտիկայի մի քանի հարցերը» ուսումնասիրությունը։ Զգալի աշխատանք է կատարված նաև իրավունքի և էսթետիկայի բնագավառներում։

Այնուհետև, ակադեմիկոս Ս. Պ. Ադալյանը մանրամասն անդրադարձավ հասարակական գիտությունների բաժանմունքի և նրա բյուրոյի գործունեության վերլուծմանը։ Նա նշեց, որ հաշվետու տարում տեղի է ունեցել բյուրոյի 15 նիստ, որտեղ քննարկվել են 42 գիտական և գիտակազմակերպչական հարցեր, որից 18-ը քննարկվել է ՀՍՍՀ ԳԱ նախագահության նիստում։ Բյուրոյում քննարկված հարցերից են՝ Գառնիի հեթանոսական տաճարի վերակառուցումը, հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի հրատարակումը, Մ. Մաշտոցի անվան մրցանակաբաշխությունը, հայ-հունգարական գիտությունների ակադեմիաների համագործակցությունը և այլ հարցեր։ Հաշվետու տարում բաժանմունքի հիմնարկներում ստեղծվել են մի շարք նոր բաժիններ. փիլիսոփայության և իրավունքի սեկտորում՝ կոնկրետ սոցիոլոգիայի լաբորատորիա, տնտեսագիտության ինստիտուտում՝ վերակազմվել և ընդլայնվել է տնտեսագիտական-մաթեմատիկական հետազոտությունների բաժինը, որի համար ձևոք է բերվել էլեկտրոնային հաշվիչ տեխնիկա, պատմության ինստիտուտում՝ պատմագրության բաժին, լեզվի ինստիտուտում՝ տերմինաբանության բաժին։ ԳԱ նախագահությունը որոշում է ընդունել հասարակական գիտությունների բնագավառի գիտական ինֆորմացիայի կենտրոն ստեղծելու մասին։

Լուրջ ուշադրություն է դարձվել կադրերի պատրաստման վրա։ Հաշվետու տարում բաժանմունքի հիմնարկներում ընդունվել են 40 երիտասարդ ասպիրանտներ՝ ասորագիտության, շումերա-

գիտության, ազգագրական սոցիոլոգիայի, Աղվանքի պատմության, հյուսիս-կովկասյան լեզուների, հայ-բյուզանդական բանասիրության, կոնկրետ սոցիոլոգիայի, տնտեսական իրավունքի և այլ սոր մասնագիտությունների գծով։ Բաժանմունքը հաստատել է նաև ասպիրանտուրայի 1969 թ. ընդունելության պլանի նախագիծը, որտեղ ուշադրություն է դարձվել այնպիսի նոր մասնագիտությունների վրա, ինչպիսիք են տնտեսագիտական մաթեմատիկան, տերմինաբանությունը, կոնկրետ սոցիոլոգիան, հին Արևելքի պատմությունը, հայ-հունգարական գրական-կուլտուրական կապերի ուսումնասիրությունը և այլն։

— Նշելով մեր հիմնարկների ձեռք բերած նվաճումները,— ասաց զեկուցողը,— չի կարելի մոռացության տալ այն հանգամանքը, որ նրանք ապահովված չեն գիտական աշխատանքի համար նորմալ պայմաններով։ Շատ գիտական աշխատողներ տեղ չունենալու պատճառով աշխատում են հիմնարկից դուրս, չկան հնարավորություններ ժամանակակից տեխնիկական սարքավորումները օգտագործելու, նոր լաբորատորիաներ ստեղծելու համար։ Մինչդեռ հասարակական գիտությունների բաժանմունքի շենքի (որի կառուցումը սկսվել է 1966 թ.) շինարարությունը շատ դանդաղ է ընթանում։

Զեկուցման վերջում ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը առաջ քաշեց գիտական հիմնարկների և բաժանմունքի առջև դրված մի շարք անհետաձգելի խնդիրներ։ Մասնավորապես նա նշեց, որ անհրաժեշտ է կոորդինացնել գիտական հիմնարկների գործունեությունը, կատարել հայ ժողովրդի պատմության, գրականության, արվեստի վերաբերյալ կոլեկտիվ հետազոտություններ, լուծել հիմնարկները նոր կադրերով կոմպլեկտավորելու, նոր բաժիններ ստեղծելու, գործուղումներ և արշավախմբեր կազմակերպելու, ֆինանսավորման, գիտական աշխատողների աշխատանքային և կենցաղային պայմանները բարելավելու, կոմպլեքսային խոշոր պրոբլեմների մշակման և այլ հարցերը։ Պետք է լուրջ ուշադրություն դարձնել հրատարակչական աշխատանքների վրա։ Տպարանի ներկա վիճակը հնարավորություն չի տալիս հրատարակելու մեր գիտնականների կողմից ստեղծած արժեքավոր աշխատությունները։ Պետք է արմատապես բարելավել նաև մեր պարբերականների ժամանակին հրատարակման և որակի բարձրացման գործը։

— Ընթացիկ տարում,— նշեց զեկուցողը,— հայ ժողովուրդը նշելու է մեր ազգային կուլտուրայի ականավոր ներկայացուցիչներ Հովհաննես Թումանյանի, Կոմիտասի ծննդյան 100-ամյակը, մեր գիտնականները պետք է ակտիվորեն մասնակցեն այդ հոբելյանների նախապատրաստմանը։

Սովետական ժողովուրդը պատրաստվում է նշելու Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակը. հասարակական գիտությունների բնագավառի աշխատողների սրբազան պարտքն է՝ արժանավայել դիմավորել այդ հոբելյանին։

Զեկուցման շուրջը բացվեց մտքերի փոխանակություն։ Ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի սեկտորի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Հ. Գ. Ասլանյանն իր ելույթում նշեց, որ հաշվետու տարում սեկտորը զգալի գործ է կատարել։ Այժմ տպագրվում կամ խմբագրական պրոցեսում են գտնվում մի շարք կոլեկտիվ աշխատություններ և մենագրություններ, որոնց թվում՝ «Հասարակությունը և մշակույթը», «Վ. Ի. Լենինը և հեղափոխության դիալեկտիկան», «Գիտական տրամաբանական վերլուծությունը» կոլեկտիվ աշխատության 1-ին հատորը (պատրաստ է նաև 2-րդ հ.), Վահրամ Բաբունուն նվիրված մենագրությունը և այլն։ Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ սեկտորը պատրաստում է հատուկ ժողվածու, որտեղ կրնդգծվի Լենինյան գաղափարական ժառանգության նշանակությունը արդիականության համար։

— Մեր հաջողություններն ավելին կլինեին,— ասաց Հ. Ասլանյանը,— եթե մեր աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծվեին։ Օրինակ, դեռ անցյալ տարվա հունիսին սեկտորում կազմակերպվել է սոցիոլոգիայի լաբորատորիա, սակայն մինչև այժմ ֆինանսավորվում է միայն լաբորատորիայի վարիչի հաստիքը։ Շատ վատ են նաև աշխատանքային տեղի պայմանները, սեկտորը զբաղեցնում է ընդամենը 3 սենյակ։

Արևելագիտության սեկտորի վարիչ, պատմագիտական գիտությունների թեկնածու, Հ. Ինճիկյանը նշեց, որ արևելագիտության բնագավառում կան բազմաթիվ հարցեր, որոնց ուսումնասիրումը ունի կարևոր նշանակություն։ Օրինակ, անհրաժեշտ է զբաղվել արտասահմանյան երկրների գրականության թարգմանությամբ, բյուզանդագիտության և արևելքի ժողովուրդների պատմության ուսումնասիրությամբ, միութենական մասշտաբով մշակել սփյուռքահայ մամուլը և այլն։ Արևելագիտության հարցերի ուսումնասիրության գործում ակադեմիայի, բարձրագույն ուսումնական հաստատությունների և Մատենադարանի գիտական աշխատողները վատ են համագործակ-

ցում։ Պետք է գրել արևմտյան Հայաստանի պատմությունը, լուսաբանել հայ գործիչների դերը արևելքի մշակույթի զարգացման գործում։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Լ. Խաչիկյանը բաժանմունքի բյուրոյի ուշադրությունը հրավիրեց գիտա-կազմակերպչական մի շարք հարցերի վրա։ Մասնավորապես նա նշեց, որ գիտական հիմնարկներում օժանդակ աշխատողների՝ թարգմանիչների, լաբորանտների, բիբլիոգրաֆիստների թիվը շատ քիչ է։ Բաժանմունքի գրադարանում վատ վիճակում է գտնվում XIX դարի պարբերական մամուլը, այն թերի է և չի մշակվում, չի կոնսերվացվում, չեն հանվում միկրոֆիլմեր, որի պատճառով էլ մամուլը մաշվում և փչանում է։ Խոսելով գիտական աշխատանքի մասին, Լ. Խաչիկյանը նշեց, որ կան շատ բնագավառներ, որոնք չեն ուսումնասիրվում։ Օրինակ՝ հին և միջին դարերի հայ մշակույթի ուսումնասիրության համար անհրաժեշտ է ունենալ իրանագետներ, թուրքագետներ, ասորագետներ։ Տարիներ շարունակ խոսում ենք հայագետների միջազգային համագումար հրավիրելու մասին, բայց չենք իրականացնում։

Ժողովում իրենց ելույթներում կարևոր հարցերի մասին խոսեցին նաև ակադեմիկոս Ա. Ղարիբյանը և բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Հովնանը։

Բաժանմունքի տարեկան ժողովում կարդացվեցին մի քանի զեկուցումներ։ «ՀՍՍՀ բնակչության վերարտադրությունը և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը 1966—1985 թթ.» զեկուցումով հանդես եկավ տնտեսական գիտությունների թեկնածու Վ. Խոջաբեկյանը, «Պատմագրական միտքը Հին Հայաստանում (նախամեսրոպյան շրջան)»՝ պատմական գիտությունների դոկտոր Գ. Սարգսյանը և «Հառնիի տաճարի վերականգնման հարցի շուրջը» զեկուցումով՝ ճարտարապետության թեկնածու Ա. Սահինյանը։